



Համաշխարհային բանկ

Նորությունների թոարկում
No. 2005/402/S

Կոնտակտներ:
Merrell Tuck-Primdahl, աշխ. հեռ. ph# 202 473-9516
Global mobil # 202 415-1775
mtuckprimdahl@worldbank.org

“ԱՐԵՎԵԼՑԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ՆԱԽԿԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՃԻ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵՎ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ”- ԱՍՈՒՄ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ

ՎԱՇԻՆԳՏՈՆ ԴՄ, Նոյեմբերի 1, 2005 – “Արևելյան Եվրոպայի և նախկին Սովետական Միության անցումային երկրների մեծամասնությունում աշխատանքի հնարավորությունները փոքր են, և զբաղվածությունը կարելի է խթանել միայն այնպիսի քաղաքականությամբ, որը հնարավորություն կտա վերակազմավորել ձեռնարկությունները և բարելավել ներդրումներին նպաստող միջավայրը”, - ասվում է այսօր թողարկված Համաշխարհային բանկի հաշտվեցումում:

“Արևելյան Եվրոպայում և նախկին Սովետական Միությունում աշխատանք գտնելու հնարավորությունների ընդլայնում” վերնագրով հաշտվեցումները կատարում է 27 անցումային երկրների աշխատանքի շուկայի վերլուծություն՝ մոտ 15 տարի առաջ տեղի ունեցած կոմունիզմի փլուզումից հետո ընկած ժամանակահատվածում: Այդ վերլուծությունը պատասխանում է երեք խումբ գլխավոր հարցերին. Ի՞նչպիսին է տնտեսության փոխակերպության ազդեցությունը աշխատանքի շուկայի վրա: Ի՞նչ առաջընթաց ունեն երկրները և ո՞րոնք են այն պատճառները, որոնք խոչընդոտում են ավելի լավ և ավելի շատ աշխատատեղերի ստեղծմանը: Ի՞նչպիսի քաղաքականություն կարող է խթանել աշխատատեղերի ստեղծումը:

Զնայած տարածաշրջանի տնտեսական հաջողության առկայությանը՝ կենտրոնական պլանավորումից դեպի ազատ շուկա անցում կատարելու

առումով, մեկ հիմնական ոլորտում արդյունքներն աղոտ են՝ դա արդյունավետ աշխատատեղերի ստեղծումն է:

“Եթե չբարելավվի զբաղվածության հեռանկարը, աղքատության զգալի աճը, որ գրանցվել է 1998 թ-ից հետո, կարող է դադարել, ինչը կքայքայի բարեփոխումների քաղաքական օժանդակությունը”, - զգուշացնում է Արուս Բաներջին, որը ստուգել է հաշվետվությունը և հանդես է գալիս որպես սեկտորի կառավարիչ՝ Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի (ECA) Մարդկային ռեսուրսների զարգացման վարչությունում:

“Չնայած փոխանցումային Ամանակաշրջանում ակնկալվում էր որոշ գործազրկություն, զարմացնում է դրա տեսականությունը”, -բացատրում է Ժան Ռուտկովսկին՝ ECA-ի գլխավոր տնտեսագետ և ուսումնասիրության համահեղինակը:

“Կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատանքից ազատված աշխատողները չկարողացան նոր աշխատանք գտնել, շատ քչերը առանց աշխատանքի մնացին մեկ տարուց ավել ժամանակահատվածում կամ զբաղված են ցածր արդյունավետություն ունեցող աշխատանքներում: Եվրամիության նոր անդամ-պետություններից մի քանիսում, ինչպես նաև որոշ միացած երկրներում գործազրկության տոկոսը երկնիշ թիվ է կազմում: Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներում խնդիրն ավելի շատ աշխատանքների որակի մեջ է՝ աշխատանքները պակաս արդյունավետ են, իսկ վարձատրությունը՝ ոչ մեծ”, - բացատրում է Ստեֆանո Սկարպետան՝ հաշվետվության համահեղինակը, աշխատատեղերի շուկայի Խորհրդականը և գլխավոր տնտեսագետը Համաշխարհային բանկի Մարդկային ռեսուրսների զարգացման և սոցիալական պաշտպանության փոխ-նախագահությունում:

Հաշվետվությունը դրդում է երկրներին բարելավել իրենց ներդրումային միջավայրը այնպիսի ուղիներով, որոնք կոզնորեն ընկերություններին ներդրումներ անելու և արդյունավետ աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ: Այն դրդում է նաև ձեռնարկել քայլեր, որոնք ուղղված կլինեն աշխատուժի շարժականության ծախսի նվազեցմանը՝ տների և հիպոտեկային շուկաների զարգացման միջոցով, ինչպես նաև բարելավելով չընդհատվող (շարունակական) հնարավորությունների մատչելիությունը:

Օգտագործելով 4,000 ավել բիզնեսի տերերի և կառավարիչների ուսումնասիրությունը. հեղինակը կատարում է այն գործոնների վերլուծություն, որոնք խրախուսում կամ վհատեցնում են ընկերություններին ներդրումներ անելու և աշխատողներ վարձելու հարցերում: **Տնտեսության և**

քաղաքականության անորոշությունը, կոռուպցիան, բարձր հարկերը և ոչ արդյունավետ դատարանները դիտվում են որպես ձեռնարկատիրական գործունեությունը խեղդող հիմնական գործոններ:

Ենթա-տարածաշրջանային կոնկրետ առաջարկություններ

Ավելի շատ և ավելի լավ աշխատատեղեր ստեղծելու համար կառավարությունները և գործարարները ենթա-տարածաշրջաններում պետք է կատարեն հետևյալ միջոցառումները, հարմարեցնելով դրանք երկրին ներհատուկ պայմաններին:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում գործազրկության բարձր տոկոսի դեմ պայքարելու համար անհրաժեշտ են ավելի շատ միջոցառումներ, ուղղված ներդրումներին նպաստող միջավայրի բարելավմանը՝ չնայած վերջերս ձեռք բերված առաջընթացին: Կարևոր է նվազեցնել նոր գործ սկսելու համար պահանջվող ծախսերը, հեշտացնել սեփականության գրանցման ընթացակարգը և ուժեղացնել պայմանագրի կատարումը: Անհրաժեշտ են նաև կենսաթոշակային և սոցիալական ապահովության համակարգերի բարեփոխումներ՝ որպես աշխատանքից հարկվող գումարի նվազեցման միջոց:

Հարավ-արևելյան Եվրոպայում անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր, ուղղված վարչարարական արգելքների վերացմանը և աշխատանքից հարկվող գումարների կրճատմանը՝ վերջինը կենսաթոշակային և սոցիալական ապահովման բարեփոխումների հետ համատեղ: Դրանից բացի երկրները պետք է իրականացնեն կառուցվածքային և կարգավորման բարեփոխումներ՝ աշխատանքի հարմարվող շուկա զարգացնելու նպատակով, որտեղ աշխատողների կենտրոնական իրավունքները արդյունավետորեն պաշտպանված կլինեն, բայց գործատուները չափազանց մեծ սահմանափակումներ չեն ունենա՝ իրենց աշխատողների քանակի և ունակությունների կանոնավորման հարցում:

Միջին եկամուտ ունեցող ԱՊՀ-ի երկրներում (ինչպես, օրինակ Ղազախստանում, Ռուսաստանում և Ուկրաինայում) գործազրկության տոկոսն ավելի ցածր է, բայց թեր-զբաղվածությունը՝ բարձր, քանի որ շատ մարդիկ ունեն ցածր արդյունավետության աշխատանքներ: Վարչարարական արգելքների նվազեցումը բարձր առաջնայնության խնդիր է, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունները կարգավորման դաշտից դուրս բերումն ու կենտրոնացումը հիմնական աշխատանքային նորմերի կատարման վրա: Դրանից բացի, եթե հնարավոր լինի մշակել գործազրկության համակարգեր և այլ ծրագրեր, որոնք կօժանդակեն հարկադրված գործազրկությանը մատնված

աշխատողներին, ավելի քչերը ստիպված կլինեն կառչել ոչ հեռանկարային աշխատանքներից, որպեսզի պահպանեն իրենց գոյատևումը:

Կովկասում և Միջին Ասիայում գտնվող **ցածր եկամուտ ունեցող ԱՊՀ-ի երկրներ**՝ միջավայրին բնույթ է թեր-զարգացած կազմակերպություններ, վատ կառավարումը և անհուսալի ենթակառուցվածքը: Ենթա-տարածաշրջանին վերաբերող առաջարկությունը ներառում է շուկայական տնտեսության հաստատությունների շարունակական զարգացումը և նոր գործ բացելու հետ կապված ռիսկերի նվազեցումը: ԱՊՀ-ի աղքատ երկրները նույնպես պետք է բարելավեն պետական ենթակառուցվածքի հուսալիությունը, վերացնեն ծանրաբեռնող մաքսային արգելքները և առևտրային կանոնները և քաջալերեն ներդրումները գյուղատնտեսական շրջանների մարդկային կապիտալի մեջ, քանի որ այս ենթա-տարածաշրջանում աշխատանքները տեղափոխվել են դեպի գյուղացիական տնտեսության ոլորտ:

“Քանի որ աշխատատեղերը ստեղծում են երիտասարդ, փոքր, մասնավոր ընկերությունները, կառավարությունները պետք է արագացնեն գործարարությանը նպաստող բարեփոխումների իրականացումը: Աշխատանքային ծրագրերը և քաղաքականությունները, ուղղված աշխատողների վերապատրաստման կամ գործազուրկներին օգնելու՝, բավական չեն լինելու հիմքում ընկած խնդիրները լուծելու համար”- եզրահանգում է Սկարպետանն:

-- ### --

Մինչև արգելքի ժամկետը լրանալը լրագրողները կարող են օգտվել ՅՍԹ նյութից Համաշխարհային բանկի Online Media Briefing կենտրոնից հետևյալ կայքում:
<http://media.worldbank.org/secure>

Լիազորագրված լրագրողները, ում, գրանցվելիս, անհրաժեշտ է նշանաբան՝
[:http://media.worldbank.org/](http://media.worldbank.org/)

Արգելքի ժամկետը լրանալուն պես հաշվետվությունը և առնչվող նյութերը առկա կլինեն հետևյալ կայքում: <http://www.worldbank.org/eca/ecajobsreport>